ւանդանում, կամ հիւանդանում են շատ թեթև կերպով, առանց հետքի որ մի ծաղկից է յայտնւում, անմիջա-պես հարկավոր է առողջներին հիւան-դից բաժանել և բոլորի ծաղիկը պատուաստել. հիւանդին պառկեցնել և գլխացաւի դէմ սառույց դնել ճա-կատին. փսխանքի առաջն առնելու համար հիւանդը պէտք է ստանայ մանր կտորներ կուլ տալ։ Ջերմի ժամանակ չպիտի քորել և պոկել մարմինը և երեսը լաւ է ձեթով կամ իւղով (վազելինով) ծածկել։

Երբ մարմինը սկսում է թեփոտ-վել, հիւանդին պէտք է տաք վաննա նստեցնել և կրկնել այդ մի քանի անգամ. Երբ թեփոտուելը բոլորովին վերջացած է, այն ժամանակ միայն կարելի է հիւանդին տանից դուրս թողնել և առողջների մօտ տանել։

Հիվանդի բոլոր շորերը անհրաժեշտ է տաք ջրի և սապոնի մեջ լավ եփելով. որպեսզի հիվանդությունն ուրիշներին չը փոխվի. սենեակն էլ պէտք է լավ մաքրել և երկար ժամանակ պատուհանները բաց պահել:

10. Կարմրուկը վարակիչ հիվանդութիւն է և գրեթէ անխուսափելի է երեխայական հասակում: Հիվանդութեան նշաններն են՝ հազ, հարբուխ, բկացաւ, աչքացաւ, ջերմ. 3-րդ կամ 4-րդ օրը կաշին դուրս է տալիս բծեր և մի քանի օր այդպես մնում: Վերջը բծերը անհետանում են, իսկ կաշին սկսում է թեփոտել.

Խնամք: Հիվանդին հենց սկըզբից անկողնում պառկեցնել. մեկուսացնել, պահպանել, լուսամուտի փեղկերը կիսափակ պահել, որովհետեւ լոյսը ցաւեցնում է աչքերը. Հազի



դէմ տաք կաթ խմացնել, գիւղերի ջրի հետ խառնած. Կերակուրը պէտք լինի թեթեւ՝ թերխաշ ձու, կաթ, սպիտակ հաց, շիլաներ. Ծարաւը յագեցնելու համար—լիմոնով և շաքարով ջուր կամ լիմոնադ և այլն:

Եթէ հիւանդը շուտ չի առողջանում— դիմել բժշկի օգնութեան:

11. Կապույտ հազ (կոկլյուշ) մանկական հասակի վարակիչ հիւանդութիւն է, որ տևում է մօտաւորապէս 4—5 շաբաթ և մի անգամ լինելուց յետոյ այլեւս չի կրկնւում: Հիւանդութեան սկզբում ջերմ է լինում, որ $38^{\circ}$—38,5 վեր չի բարձրանում: Հիւանդը սաստիկ հազում է և իւրաքանչիւր հազալիս թքում է կպչուն խուխ: Հազի ժամանակ տուժէ և վայրենաբար նման ձայներ են լսում: Այսպիսի բռնկումներ կրկըն-

ւում են օրը մոտ 18—20 անգամ.
Յուրաքանչյուր անգամից հետո մի տա
ժամանակ դադար է լինում: Այդ դա-
դարը ամենանպատակահարմար ժամանա-
կըն է երեխային կերակրելու համար:

Խ ն ա մ ք. Ծառաեկ բժշկությունն
չկայ, ատամներիքին հարկավոր է հե-
ռացնել հիվանդներից. Ջերմը վեր-
ջանալուց հետո շատ օգտակար է
երեխաներին դուրս տանել՝ մաքուր
օդ շնչելու: Լավ է ներգործում քի-
նին, որ հարկավոր է օրը 2—4 ան-
գամ փոքրիկ քանակությամբ խմե-
ցնել: Երեխայի բերանն ամեն ան-
գամ հագնից հետո պետք է մաքրել
լորձունքից:

12 Հարբուխ է անվանում քթա-
խորշի լորձաթաղանթի բորբոքումը, որ
առաջ է գալիս մրսելուց, քիթը
ծխախոտ քաշելուց. Քթապահար դա-



դերից, վարակիչ հիվանդություններից, ինչպես կարմրուկը, ինֆլուենցիան, դիֆթերիան և այլն: Հարբուխի նշանները ամենքին յայտնի են:

Խ ն ա մ ք: Հարբուխի դեմ անհա-
յին միջոցներով կռվելու համար կա-
րելի է միայն խորհուրդ տալ՝ երբ
հիվանդը մրսած է, տաք դոլոբշի
ջնջել քիթը փչելուց և տաք հագ-
նվելու, խուսափել այն ջերմից և դեղերից,
որ շատերը հարբուխի ժամանակ
քթով ներս են քաշում բժշկելու
համար, մինչև խորհրդակցություն չա-
ցընում են, որովհետև բարդություն-
ներ դժվարեցնել, երբ քթով ջուր քաշե-
լուց բորբոքվել է ականջի մեջը և
խլության համար շատ վտանգա-
վոր հիվանդություն է առաջ եկել:
Թոքի յարմար պետք է , երբ
երեխայի ժամանակ չի անցնում. ան-

-հրաժեշտ է բժշկին դիմել, որը և կըսովորեցնէ, թէ ինչ անել հիւանդութեան դէմ։

Ուրիշ պատճառներից առաջ եկած հարբուխը անցնում է, երբ սկզբնապատճառը հեռացւում է և հիւանդը փոխում է իր կենցաղը։

13. Խեղդուած մարդուն անմիջապէս պառկեցնել. զգեստը, գօտին, օձիքը և այլն արձակել, երեսին սառը ջուր սրսկել. երեսն ու մարմինը ձեռքերով շփել։ Ուշքի գալուց յետոյ չը պէտք յանկարծ վեր կենալ, այլ մի փոքր պառկած մնալ. լաւ է մի քիչ գինի, օղի, թէյ կամ սուրճ խմել։

14. Սառած մարդուն չը բերել տաք սենեակ, այլ ցուրտ տեղում, նախասենեակում դնել (ձմեռնապատուհանին [illegible] մարմինը չշփել, այլ ձիւն



պահել)։ Ոտքերը հանելուց յետոյ, սառը ջրի մէջ դնել կամ ձիւնով տրորել, երբ մարմինը կըտաքանայ և անդամները կը փափկեն, այն ժամանակ հարկաւոր է նրան մի տաք տեղ պառկեցնել և գինի, օղի կամ տաք թէյ խմեցնել։

Սառած մատը կամ ոտը նոյնպէս պէտք է հանել և առաջ սառը ջրի մէջ պահել կամ ձիւնով տրորել և ապա կամաց կամաց տաքացնել։ Թմրացած մասերին քսել ձէթ կամ սագի ճարպ։

15. Փորկապութիւնը մի հիւանդոտ դրութիւն է, ուստի անհրաժեշտ է կռուել դորա դէմ ոչ լուծողականների միջոցով. օրգանիզմն սովորում է այդ դեղերին և շատ ուժեղ լուծողականն էլ կորցնում է իր ազդեցութիւնը.

Խ ն ա մ ք: Փորլուծության դեմ ամենալավ միջոցը կանոնավոր կենցաղն է: Առավոտ վեր կենալիս՝ խըմել մի բաժակ սառը ջուր և յետոյ դուրս գալ մի փոքր զբոսնելու. օրվայ մեջ լավ է ֆիզիքական աշխատանքով կամ մարմնամարզությամբ պարապել. ուտել մրգեղեն, մեղր, կանաչեղեն և առհասարակ ամեն տեսակ կաթնից կերակուր և սև հաց: Մարմինը սառը ջրով շփել, փորին մասաժ անել և որոշ ժամերին ամենայն օր աշխատել դուրս գալ հարկավորության համար, եթե մինչև անգամ պահանջ չըզգացվի: Լուծողականներից խուսափել և գործածել միայն անհրաժեշտ դեպքերում:

16. Քութեշ վարակիչ հիվանդություն է. սկսում է ջերմով, կոկորդը ցավում է, տալիս մանր բծեր, որոնք



տարածվում են ամբողջ մարմնի վըրայ, ազատ թողնելով միայն ճակատը, քիթը և շրթունքները. բուծը պատում է, մինչև ոտքերը ուռչում են: Մի քանի օրից յետոյ ջերմը թուլանում է, իսկ դուրս տալը անհետանում. 10—12-րդ օրը կաշին սկըսում է լայն շերտերով թեփոտվել. 2—6 շաբաթից յետոյ թեփոտումը վերջանում է և հիվանդը քութեշից առողջացած համարվում. սակայն վըտանգը դեռ անցած չէ, որովհետև քութեշը՝ իբրև հետևանք զանազան հիվանդություններ է առաջացնում. շատ յաճախ երիկամունքների բորբոքում: Այդ պատճառով առողջանալուց յետոյ էլ, 2—3 շաբաթ շարունակ, հիվանդը պետք է իրան զգույշ պահէ, չմրսի, որովհետև երիկամունքների բորբոքումը հենց այդ ժամանակ է յայտնվում,

**Խ ն ա մ ք.** Բժշկության համար գլխավորն է մաքրությունը և պատշաճ սնունդը: Բերանը անհրաժեշտ է օրական մի քանի անգամ ողողել կամ աղաջրով, կամ ջրախառն բորայի թթուտով (борная кислота) 1 թեյի գդալ՝ մի մեծ բաժակի համար: Մաքուր պետք է պահել նույնպես քիթը և ականջները: Մարմինը քսել տաք ձեթ: Սնունդի համար վերցնել կանաչեղենը, որ ամենից պատշաճն է երեխաների համար: Միս կամ բուլիոն ամենևին չտալ. Խմելու համար գործածել հասարակ ջուր կամ լիմոնադ: Ծանր միսը կարելի է տալ միայն հիվանդության չորրորդ շաբաթից. երբ կաշին սկսում է թեփոտվել: Ցանկալի է հիվանդին 4—5 օրը մի անգամ տաք վաննա նստեցնել (15—20 րոպե) և



ամենից շատ ջանք գործ դնել, որ տաք ջըրից յետոյ հիվանդը չմրսի: Եթե քութեշն առանց բարդությունների է. հիվանդը կարող է երեք շաբաթից յետոյ ոտքի կանգնել, իսկ տանից դուրս գալ կարող է միայն թեփի վերջանալուց յետոյ: Քութեշի ժամանակ առողջ երեխաներին պետք է, որքան կարելի է շուտ հեռացնել, իսկ երբ հիվանդը լավացել է, նրա շորերը այրել կամ եփ տալ ախտահանաջրի մեջ. սենեակը լավ մաքրել:

17. Օձի խայթոց: Խայթած անդամը վէրքից բարձր ամուր կապել, վէրքը ծծել, որ թոյնը դուրս գայ և կարմրած երկաթով այրել. Հիվանդին քրտնեցնել և օղի կամ գինի խմացնել:

Բժ. Լ. Գալստեան

# ԱՏԱՄՆԱԲՈՒԺԻ 10 ՊԱՏՎԻՐԱՆԸ

1. Լավ է մոռանաք լվացվել, քան մաքրել ձեր ատամները և ողողել ձեր բերանը։

2. Վարժեցրեք երեխաներին բավականություն զգալ իրենց սեփական ատամների մասին հոգ տանելու մեջ։ Կաթնատամների մասին հոգ տանելը ոչ պակաս կարևոր է, քան մշտական ատամներինը. պատանեկության հասակում բաց թողածը, հետագայում այլևս ձեռք չի բերվի։

3) Քիչ ուտեք քաղցր և փափուկ կերակուրից, ատամները առողջ պահելու ամենալավ միջոցը չոր հացն է և նրա կեղևի լավ ծամելն է։

4. Երբեք մի մոռանաք լվանալ ձեր ատամները քնելուց առաջ. ով այդ բանը թողնում է առավոտեան,



նա նման է այն մարդուն, որը իր գոմի դռները փակում է ձին գողացվելուց հետոյ։

5) Ատամների մեքենայական մաքրումը խոզանակի օգնութեամբ կազմում է առողջապահութեան հիմքը։

6) Ատամները մաքրելիս, անվնաս ու հականեխական հեղուկը և ատամների լավ փոշին հանդիսանում են ամենալավ օժանդակ միջոցները։

7) Տարին երկու անգամ ցույց տվեք ձեր ատամները ատամնաբուժին, որը ժամանակին կնկատի ատամների փթելը և միջոցներ ձեռք կառնի նրա տարածման առաջը առնելու։

8) Ժամանակ առ ժամանակ հոգ տարեք ատամների քարը հեռացնելու մասին։

9) Հին արմատները, որոնց լցնել

(пломбировать) չի կարելի՝ պէտք է հեռացնել, միևնոյն է ցաւում են նրանք թէ ոչ։

10) Մայրերը նախ քան երեխայի ծնւելը, ինչպէս նաև կրծքով կերակրելու ընթացքում պիտի աշխատեն շատ գործածել անօրգանական աղերով առատ կերակուրներ (կանաչեղէն, կաթ, ձու.), իսկ երեխաներին ծամական հասակում նոյնպէս պէտք է տալ նման կերակուր, որպէսզի զարգանան առողջ ատամները։

Pése



ԴՊՐՈՑԱԿԱՆ

## ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

(Քաղւած ընկ. Ն. Աղբալեանի Հ. Յ. Դ. IX ընդ. ժողովին տւած զեկուցումից)

Հայաստանի Հանրային կրթութեան Նախարարութիւնը

Հայաստանի կրթական գործը երեք շրջանի կարելի է բաժանել։

1918 թ. օգոստ. 1-ին հաստատւած է հայոց կառավարութիւնը։ Օգոստոսի 15-ից մինչև Նոյեմբերի 16-ը կարելի է համարել կրթ. գործի առաջին շրջան, երբ Ներք. Գործերի Նախարարութիւնն էր վարում այն՝ ղեկավարութեամբ Տոքտ. Գրիգորեանի։ Այս շրջանն առանձնապէս զբաղւած էր արձակւած պաշտօնէութեանը լիկւիդացիայի ենթարկելով։

Նոյեմբերի 6-ին որոշում է ունենում Հայ. Կոմ. մինիստրութիւնը, որին յանձնւում է Ս. Տարութինեանին։ Նոյն ամսի 27-ին մինիստր է նշանակւում Աթարբեգեանը, որը կարճ ժամանակից յետոյ, այն է դեկտ. 24-ին հրաժարւում է և նրան փոխարինում է Մելիք-Դարագեօզեանը, որից յետոյ ընդունում է Հ. Հանր. Կրթ. Ի. շրջանը։

Սովի և համաճարակի պատճառով դեկտեմբերի վերջերին դպրոցները փակւում են և միայն մարտ ամսին վերաբացւում. ուսումը շարունակւում է մինչև յունիսի 1-ը։ Այս ուսումնական տարում հազիւ 5 ամիս կանոնաւոր ուսում է տեղի ունեցել։ Շինութիւնները գրաւուած են եղել զինւորականների և որբերի կարիքների համար։ Անա այս ժամա-



նակաշրջանում որոշւած է բանալ համալսարան և հանրային մանկավարժարան։

Այնուհետև մինիստրութեան գլուխ է անցնում Սիր. Տիգրանեանն և 1 ու կէս ամիս վարելով կրթական գործը, պատրաստում է կրթ. գործի վերաբերեալ նախահաշիւները, ուսուցիչների վարձատրութեան չափը և մինիստրութեան դիւանը։

Օգոստոսի 16-ից մինիստր է նշանակւում Նիկ. Աղբալեանը, որ և շարունակում է վարել Հ. Հ. կրթ. ամբողջ գործը մինչև այսօր։

Հայ դպրոցը Հայաստանում

Նախքան Հայաստանի Հանրապետութեան գոյութիւնը Հայաստանի այժմեան տարածութեան վրայ կային 7 կրթ. միջնակարգ, 1. մանկաւոր պրոգիմնազիա, 2. քաղաքային

տարրական, 3 աղջ. միջնակարգ և 673 տարրական դպրոցներ։

1918-19 ուս. տարում կային՝ 13 միջնակարգ դպրոց (որոնցից 5-ը օրիորդաց) 116 դասարաններով, 196 ուսուցիչներով և 3445 աշակերտներով նաև 113 տարրական դպրոց, որոնցից 78-ը պետական, 48-ը եկեղեցական, 7-ը քաղաքային, ընդամենը 308 դասատուներով և 12225 աշակերտներով։

Այսպիսով միջնակարգ դպրոցների թիւը աւելացել է մօտ 2 անգամով, տարրականներինը՝ 5 անգամով։

1919-20 ուսումնական տարուայ համար ծրագրուած է ունենալ 23 միջնակարգ և 500 տարրական դպրոց, 900 դասատուներով, որոնցից 400-ից աւելին արդէն նշանակուած են դեռ նոյեմբ. սկզբին։



Կրթական գործի իւրաքանչիւր բաժին իր վարիչն ունի։ Այսպէս, կան՝ միջնակարգ, տարրական դպրոցների, հնութեանց պահպանման, բժշկական մասերի վարիչները։

Հայաստանի դպրոցական 11 շրջաններն ունեն իրենց շրջանային տեսուչները, սակայն մի քանիսները օգնականներով են կառավարւում։

Հրահանգուած է գաւառներում բանալ այնքան դպրոցներ, որ ոչ մի երեխայ դուրս չը մնայ. ընդունելութեան համար միայն լեզուից և մաթեմատիկայից քննութիւն կը պահանջուի։ Օտար լեզուներից միայն մէկը պարտաւորեցուցիչ է։ Մինչև Գ. դասարանը մեր բոլոր դպրոցները ազգայնացուած են, միւսները կազգայնացուեն աստիճանաբար։

Ուսուցիչներին հրաւիրելու իրա-

ւունքը տանված է հողաբարձրությու-
նից։ Վերջինները միայն անտառա-
կան մասը պետք է հողան։ Այսպիսո
օրինակ, թռչունների գանձում, յա-
ռակի գումարների հայթայթումը։
Կորուստները ծրի և ամենյալ, մինչե-
արութ. միայն ուսուցիչների ռոճիկ-
ներն է տալիս։

Հուլթեանց պահպանման համա
կազմված է կանոնադիր։

Մեծի պետությունների նիւթերը Սա-
նահինից շուտով փոխադրվելու են։

Սասուն. խորհրդի համար մշակ-
ված են առանձին կանոնադիր նշանա-
լու համար նրա իրավասության
սահմանները։

Աշխարհագրաօրյալ[illegible]ված է հա-
մալսարան։

Ուսուցչական սեմինարիայի բա-
ցումը կատարվեց։



Բացվելու են 11 դասատուների մեջ
դրամատիկական ընկերություններ, ժո-
ղովրդական համալսարան, որը դաս-
ավանդվելու է բոլոր ուսարկայ և
ուսուցանողների համար ընկերությու-
ներ։ Նոր գիմնազիայի մեջ պետք
հիմնվի համբ. գրադարան, որը դեր-
վելու են նաև նկարներ։

Հայոց ազգագրական ընկերու-
թյունը իր հարստությամբ փոխադր-
վելու է Հայաստան։

Որոշված է բանալ նաև թանգարա-
կան վարժարան, այնտեղ կեն դերասա-
նները պետք է վարժվեն նոր
դերասաններին։

Երաժշտության համար նախա-
պատրաստական դասընթացներ են
տեղի ունենում։

Դիմված է երգած [illegible]ական
ընկերություններին, որպեսզի բան-

նիքալական դպրոցի համար ծրագիր մշակել։

Շախմատախաղ տարածելու համար առաջարկություն կայ մարզումի մի դպրոց բանալ և ուսուցիչներ պատրաստել։

Կազմված է հնագիտական մի յանձնաժողով՝ ձեռագրերը ժողովելու համար։

Մոտ ապագայում հրատարակվելու է «Թանգարան գիտության և արվեստից» մի գիտական ամսագիր։

## Նոր լեզուներ

Եվրոպական լեզուներից մեր դպրոցների մեջ կատարվում գերմաներենը և ֆրանսերենը։ Անգլիերեն ևս պետք է մտցնենք ամենադասարանների մեջ։ Ուսանողները կսովորեն երեք օտար լեզու, իսկ առայժմ սովորած



ենք հին գրությունը պահել գիտա գիրաններում։

## Որքան է ծախսում

Պետական բյուջե. բյուջեի (400 միլ. ր.) 5 տոկոսը կազմում է կրթականը՝ այսինքն 20 միլ. ռուբլի, թերևս 30 միլիոնի համար։

## Համալսարան

Համալսարանում անհրաժեշտ է համարում հայագիտական, բժշկական և տեխնիկական գիտությունները ուսուցել՝ երիտասարդությունը մեր երկրում պահելու նպատակով։

## Եզդիների դպրոցները

Եզդիների համար արդեն հայ լեզվով դպրոցներ են բացում. մտածվում է դպրոցներ բանալ նաև քրդերի համար. Թաթարների դպրոցա-

կան գործի վրայ եւ հարկ եղած ուշադրութիւնն է դարձնում:

### Ժողովրդական գրադարան

Ժողովրդական գրադարանի համար յատկացուած է 360000 ր., ընտրուած է մի յատուկ մարմին՝ ընտրելու համար ժողովրդական գրադարանի համար յարմար գրքեր եւ ապա անմիջապէս բանալ այդ գրադարանը:

### Ուսուցիչների վարձատրութեան ձեւը

Ուսուցիչները վարձատրւում են չորս տարբերանով.—1) համալսարանաւորը, 2) ուսուցչական ինստիտուտաւորը, 3) միջնակարգ եւ 4) ոչ միջնակարգ կրթութիւն ունեցող: Եթէ մի ուսուցիչ երկար տարիներ բարեխղճաբար ծառայած է եւ աչքի ընկած իբրեւ դաստարակ, եթէ անգամ միջնակարգ կրթութիւն ստացած չէ, շրջանային ուսուցչի վկայութեամբ միջնակարգ ուսումնարանի աւարտածներին կհաւասարեցուի Ուսումն. Խորհրդի կողմից:



Այս տարի բոլոր գիւղերում դըպրոցներ չկան ուսուցիչների պակասութեան պատճառով:

* * *

Անկարող չենք համարում առաջ բերել Հ. Յ. Դ. IX ընդ. ժողովում կրթական գործի վերաբերեալ ընդունուած բանաձեւը, որ որոշ չափով ուրուագծում է հայ դպրոցի դաստիարակման ապագայ ուղիները:

### Հ. Յ. Դ. IX-րդ ընդհ. ժողովի բանաձեւը՝ հանրային կրթութեան մասին

Հանելով հանրային կրթութեան վերաբերեալ կենտրոնացումը, ընդհանուր ժողովը հրահանգում է.

1) Հնար եղածին չափ շուտով իրագործել ձրի և պարտադիր տարրական ուսուցումը հանրապետութեան քաղաքացիների համար՝ առանց ազգի և սեռի խտրութեան:

2) Արագօրէն ազգայնացնել հանրային կրթութիւնն իր բոլոր աստիճաններով և ճիւղաւորումներով:

3) Յատուկ ուշադրութիւն դարձնել ժողովրդական դպրոցների և հասարակաց հանրութեան կրթութեան վրայ:

4) Վերակազմել հանրային կըրթութեան համակարգը ինքնագործունէութեան և աշխատանքի սկզբունքով, դպրոցը վերածելով կըրթարան աշխատանոցի:

5) Ազգային փոքրամասնութեանց տարրական կրթութիւնը վարել նրանց մայրենի լեզուով:



# ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՆԱՆՔԸ

Պատերազմի ընթացքում հայ դըպրոցական կեանքը ուժերը հետզհետէ թուլացան գաւառներում, դա ցըների պահպանման նիւթական միջոցների պակասութեան, դասատուների քանակի նուազման և հոգևորութեան վերացման պատճառներով: Վերջնական հարուած տուեց նրանց մեծ մասի գոյութեանը թիւրքական հրոսակների աղետաբեր արշաւանքը, որի հետևանքով մինչև 1918/9 քը, որի հետևանքով մինչև 1918/9 ուսում. տարին գոյութիւն ունեցող բոլոր ծխական ու պետական դըպրոցները փակւեցին աւերիչների տեղ կոխած վայրերում: 1919 թ. առաջին կիսում Վրաստանի հայերը ընդամենը 46 դպրոց ունէին, որոնցից Թիֆլիսում 10, Թիֆլիսի

գաւառում, Բորչալուի, Կախէթիայի, Գորիայ, Դուշեթայիսի և Սուխումի շրջաններում 36 դպրոց։ Նոյն տարուայ երկրորդ կիսում դպրոցների թիւը հետզհետէ աւելացաւ շնորհիւ Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդի աւելի ակտիւ գործունէութեան 1919/20 ուսում. տարուայ սկզբից։ Որոշուեց գոյութիւն ունեցող դպրոցներին մի միլիոն բուբլու նպաստ տալ, նոյնքան էլ յատկացնել նոր կամ վերաբացուելիք դպրոցներին։

Այդ ժամանակ Թիֆլիսում և Նրա գաւառում 15 դպրոց գոյութիւն ունէն, Գորիում և շրջանում 9 (քաղաքում հայկական գիմնազիա), Կախեթիայի շրջանում 6 (Թելաւում գիմնազիա), Ախալքալաքում և շրջանում 10, Բորչալիում 6, Ախալ-



ցխայում միայն Եփրարէթեան դըպրոցը, Թուքալիսում և շրջանում 3։

Բացի այս դպրոցներից Վրաստանում գոյութիւն ունէին շատ պետական և քաղաքային միջնակարգ և տարրական դպրոցներ, որոնց մէջ հայ երեխաները կամ անխառն էին, կամ մեծամասնութիւն, կամ փոքրամասնութիւն էին կազմում։ Անցած 1919 թ. սկզբին Վրաստանի լուսաւորութեան մինիստրը կարգադրութիւն արեց գաւառների տարրական դպրոցներում հայ վիրախօս երեխաներին վրացերէն լեզուով դասաւանդման մասին, հայերէնը իբրև առանձին առարկայ որոշելով։ Նոյն տարուայ նոյեմբեր ամսում գաւառում, նաև Ազգային Խորհրդի բացած դպրոցներում՝ կառավարութեան գործա-

կալներն այսպիսի միջամտութիւն իրենց թոյլ տալին։ Հարցի այս կողմը, սակայն, բարեբախտաբար առայժմ հարթուած է համարւում Ազգային Խորհրդի ազդու բողոքի շնորհիւ։ Մութ է մնացել միայն գիւղական հայ երեխաներով պետական դպրոցների ազգայնացման հարցի գործադրութիւնը։ Թիֆլիսում, ինչպէս յայտնի է, քաղաքային դպրոցներն ազգայնացած են։ Այստեղ այսպիսի հայկական դպրոցների թիւը 18 է։

Ազգային Խորհուրդը իր իրաւասութեան տակ գտնուած դպրոցական գործը հէնց սկզբից կարգաւորելու համար հրատարակեց «Կանոնադրութիւն Վրաստանի հայոց ժողովրդական դպրոցների», որի մէջ որոշուած են ֆունկցիաները Ազգային



Խորհրդի Գործադիր Մարմնի, դըպրոցական վարիչի, դպրոցական խորհրդի, շրջանային տեսչի, դըպրոցական տնտեսական խորհրդի, մանկավարժական խորհրդի, միջնակարգ դպրոցի վերատեսչի, տարրական դպրոցի տեսչի, վերատեսչի օգնական-տեսչի, ուսուցիչ-ուսուցչուհիների, ինչպէս նաև դպրոցական այլ պաշտօնեաների և աշակերտ-աշակերտուհիների վերաբերեալ կանոնները։ Ինչպէս որ տեսնում ենք, Վրաստանի դպրոցական գործը բարդ կազմակերպութեան շըրջանի մէջ է մտնում։ Մօտաւոր ապագան ցոյց կը տայ նրա հետևանքները։

Այնուհետև Ազգ. Խորհրդի կարգադրութեամբ նոյնպէս ամառը կազմւեց «Տախտակ դասերի Վրաս-

տանի հայոց հանրակրթական դպ-
րոցներին։ Հանրակրթական դպրոց-
ները վերածուած են երեք աստիճա-
նի՝ տարրական դպրոց,
բարձր տարրական դպրոց և միջ-
նակարգ դպրոց։ Սրանք ոչ թէ ա-
ռանձին տիպի, միմեանցից անկախ
ծրագրներով դպրոցներ պիտի լի-
նեն, այլ մի միասնական դպրոցի
երեք աստիճանները կամ բաժան-
մունքները պիտի ներկայացնեն։
Այս տախտակը խոստանում է որոշ
թարմութիւն մտցնել մեր ուսման
ծրագրի մէջ, որ ամառուանից ձեռ-
նարկած է պատրաստել և 1919
թ-ի աշնանից ենթարկելով Թիֆ-
լիսի հայ դպրոցների մասնագէտ
դասատուների քննադատութեանը՝
հրատարակուած է առանձին գրքոյկով։

Այժմ մեր դպրոցական կեանքը
նիւթական միջոցներից աւելի կա-



րօտ է ուսուցչական ուժերի, որ
ինչպէս Հայաստանում, նոյնպէս էլ
Վրաստանում, մանաւանդ առաջի-
կայ տարին, չափազանց զգալի չա-
փերով պիտի արտայայտուի։ Արտա-
կարգ միջոցներով պէտք է համա-
ռօտ դասընթացով դասատուներ
պատրաստել մեծաքանակ նոր բաց-
ուելիք դպրոցների բաւարարութիւն
տալու համար։

Յ. ՏԷՐ-ՄԻՐԱՔԵԱՆ

## ԲԱՆՒՈՐԱԿԱՆ

## ԿԱՐԾԻՔՆԵՐ

### Արհեստակցական միութիւնների մասին

*Արհեստակցական միութիւնները սոցիալիզմի դպրոցներն են։ Այդ միութիւնների մէջ բանւորները սոցիալիստներ են դառնում, որովհետև օրէց-օր կռւում են կապիտալի դէմ։*

*Կարլ Մարկս*

*Արհեստակցական միութիւնը մի այնպիսի բանւորական կազմակերպութիւն է, որ գոյութիւն ունեցող պետական և հասարակական կարգերի սահմանում ձգտում է աշխատաւորների կենսական մակերևոյթը բարձրացնել։*

*Աւգուստ Բեբել*



*Արհեստակցական միութիւնը ոչ միայն բանւորներին հնարաւորութիւն է տալիս ժամանակակից պայմաններում կռւելու, կապիտալիստական ռեժիմի տակ պաշտպանելու աշխատավարձը, առողջութիւնը և ազատութիւնը, այլ և նախապատրաստում է նոր կարգ, արթնացնելով պրոլետարների նախաձեռնութիւնը և ձևակերպելով գործողութեան օրգանները, որոնք կոմմունիստական կարգերում գործադրելով, կդառնան վարչական օրգաններ։*

*Ժան Ժորէս*

*Ընդհանուր, միջազգային հոսանքը ուժեղ թափով մղում է դէպի կուսակցական քաղաքականութեան և արհեստակցական միութեան միացումը և ոչ թէ բաժանումը, այդ*

պատճառով արհեստակցական միութիւնները պէտք է հեռանան կուսակցական քաղաքականութեան։

Կարլ Կաուցկի

Արհեստակցական միութիւնների անկուսակցականութիւնը մեզ վտանգ է ներշնչում։

Էմիլ Վանդերվելդ

Պէտք է արհեստակցական միութիւնները և քաղաքական կուսակցութիւնը կազմեն մի անբաժանելի ամբողջութիւն, փոխադարձաբար պաշտպանեն ու լրացնեն միմեանց։

Հայնրիխ Շցրեբէլ

## Ի՞ՆՉ Է ԿԱՊԻՏԱԼԸ

(պրոֆ. Ն. Կարեեվի)

Առանց կապիտալի արտադրել չի կարելի։ Դատարկ ձեռքերով մարդ ոչինչ չի կարող անել։ Երկրագործութեան։



արհեստների համար անհրաժեշտ են առանձին գործիքներ։ Եթէ մէկը կերակրւում է որսորդութեամբ և ձկնորսութեամբ, մինչև անգամ նրան հարկաւոր է հրացան, կամ նետ ու աղեղ, կամ ուռկան։ Ցետոյ, մարդկանց արդիւնաբերական գործունէութեան մէջ անհրաժեշտ է հում նիւթ այսինքն այն նիւթը, որը ենթարկւում է մշակութեան, նախ քան գործածելը։ Վերջապէս աշխատանքով ստացուած բերքը պէտք է պահպանուեն, գործիքները նոյնպէս։ Դրա համար հարկաւոր են շինութիւններ։ Նրանք հարկաւոր են նոյնպէս բանւորներին աշխատելու։ Ամեն մէկ արտադրութիւն պահանջում է աշխատանքի մի քանի ծախքեր (գործիքների, հում նիւթի, շինութիւնների վրա և

այլն), որոնք արուած են նախ քան այդ արտադրութեան սկսելը։ Առանց դրան արտադրութիւնը հնարաւոր չէ։ Բոլոր այդ ծախքերը կոչւում են կապիտալ։

Հետեւաբար, կապիտալը նախկին աշխատանքի արդիւնքն է։ Բնութիւնն, ինչպէս գիտենք, ձրի ոչինչ չէ տալիս մարդուն։ Նա դրամագլուխն էլ ձրի չի տալիս։ Դրամագլուխը կարող է երեւան գալ միայն այն պատճառով, որ առաջուց ծախսել են որեւէ քանակութեամբ աշխատանք հէնց նրա արտադրութեան համար։ Յետոյ կապիտալ կարող է կոչուել միայն այն իրը որն հարկաւոր է նոր իրեր արտադրելու համար։ Կապիտալ չի կարող կոչուել այն ամենը, որ հարկաւոր է մարդուն իր անմիջական գործածու-



թեան համար, այլ միայն այն, որ հարկաւոր է նոր իրեր արտադրելու համար։ Ուստի կապիտալ չէ այն տունը, որի մէջ մենք ապրում ենք, այն հացը, որ մենք ուտում ենք։ Սակայն այն տունը, որի մէջ դետեղուած է արհեստանոցը, այն հացը, որով մենք կերակրում ենք բանուորներին, այն սեղանը, որի վրա ամրացրած են փականագործի բանող—սեղմող գործիքները, —այս բոլորը կապիտալ է, որովհետեւ ծառայում է նոր արտադրութեան։

Հետեւապէս որպէս զի որեւէ իր կոչուի կապիտալ նա պէտք է լինի 1) հետեւանք նախկին աշխատանքի, և 2) ծառայէ նոր արտադրութեան համար.

Այսպէս ուրեմն կապիտալ կոչւում է մարդու ձեռքով արտադրուած ամէն մէկ առարկայ, որ նշանակուած է նոր արտադրութեան համար։

---

# ՀԱՅԱՍՏԱՆ

## ՀԱՅԵՐԻ ԹԻՒԸ

Հարաւային Կովկասի հայ ազգաբնակութիւնը

| | | |
|---|---|---|
| Երեւանի նահանգում | | 669.871 |
| Գանձակի | » | 418.859 |
| Կարսի շրջանում | | 118.217 |
| Թիֆլիսի նահանգ. | | 411.747 |
| Բագւի | » | 120.057 |
| Սուխումի շրջանում | | 20.743 |
| Սեւ-ծովեան նահ. | | 18 061 |
| Բաթումի շրջանում | | 15.[illegible]82 |
| Դաղստանի | » | 4 752 |
| Քութայիսի նահ. | | 4.643 |
| Զաքաթալայի շրջ. | | 2.530 |

Գումար 1.804.662 հայեր

## ՌՈՒՍԻ-ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹԻՒՆԸ 1914 Թ.

| | ԵՐԵՒԱՆ<br>Ամբողջ նահանգը | ԳԱՆՁԱԿ<br>Արեւմտ. կէսը | ԿԱՐՍ<br>Կարսի Արդահանի հիւսիս. մասից | ԹԻՖԼԻՍ<br>Միայն հարաւ-արեւմտ. անկիւնը | Ընդամէնը. | |
|---|---|---|---|---|---|---|
| Հայեր . . | 669.000 | 876,000 | 98.000 | 153.000 | 1.296.000 | 1.361.000 |
| Ռուս., վրացիներ և այլն | 16.000 | 9.000 | 28.000 | 12.000 | 65.000 | |
| Թուրքեր . | 8.000 | 3.000 | 50.000 | — | 61.000 | 678.000 |
| Թաթարներ. | 365.000 | 138.000 | 12.000 | 22.000 | 537.000 | |
| Քիւրդեր. . | 84.000 | — | 4 .000 | — | 75.000 | |
| Եզիդիներ . | 17.000 | — | 4 .000 | — | 38.000 | 38.000 |
| | 1,109.000 | 536.000 | 250.000 | 197.000 | 2.072.000 | |

## ԵՕԹ ՎԻԼԱՅԷԹՆԵՐԻ ԵՒ ԿԻԼԻԿԻԱՅԻ ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹԻՒՆԸ
*1914 Թուականին*

| | 7 Վիլայէթները Տիգրիսից հարաւ և Եփրատից արեւմուտք շրջաններն առանց հաշւելու | Կիլիկիան Մարաշի, Ադանի Ջէբէլ Բէրէքէթի սանջակ. | Գումար | |
|---|---|---|---|---|
| Հայեր | 1.198.000 | 205.000 | 1.403.000 | 1.850 000 քրիստոնեաներ |
| Յոյներ | 242.000 | 40'000 | 282.000 | |
| Նեստորական, Յակոբեան, քաղդէացի և եւրոպացիներ | 124.000 | 41.000 | 165.000 | |
| Թուրքեր | 865.000 | 78.000 | 943.000 | 1 635 000 մահմեդականներ |
| Քիւրդեր | 424.000 | 58.000 | 482.000 | |
| Լազեր չէրքէզներ, արաբներ, պար. | 190.000 | 20.000 | 210.000 | |
| Ղզլբաշներ, եզիդիներ, ֆէլլահներ | 255.000 | 48.000 | 303.000 | 309 000 զանազան կրօններ |
| | 3.298.000 | 490.000 | 3.788.000 | |

## ԱՄԲՈՂՋ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱԲՆԱԿ. 1914 Թ.

| | Տաճկա-Հայաստ. | Ռուսկա. Հայաստ. | ԸՆԴԱՄԵՆԸ | |
|---|---|---|---|---|
| Հայեր | 1.403,000 | 1.256,000 | 2.699,000 | 3.211.000 Քրիստոնեաներ |
| Յոյներ, ասոր.,նեստորականներ և այլն | 447,000 | 65,000 | 512,000 | |
| Թուրքեր | 943,000 | 61,000 | 1.005.000 | |
| Թաթարներ | | 537,000 | 537,000 | |
| Քիւրդեր և Թիւրք. | 482,000 | 75,000 | 556,000 | 2.308.000 Մահմեդականներ |
| Լազեր, չէրքէզն. արաբ և այլն | 210,000 | — | 210,000 | |
| Ղզլբաշներ, զազաներ, եզիդին. այլն | 303,000 | 38,000 | 341,000 | 341,000 Զանազան դաւան. |
| | 3.788,000 | 2.072,000 | 5.860,000 | |

## ԱՄԲՈՂՋ ՀԱՅ ԱԶԳԱԲՆԱԿ. 1914 թ.

Հայաստանում՝

| | |
|---|---|
| Տաճկահայաստան . . . | 1.403.000 |
| Կովկասեան Հայաստան | 1.296,000 |
| Հայաստանին սահմանակից շրջաններում . | 2.699,000 |
| Ասիական Թիւրքիայի այլ շրջաններ . . . . | 440,000 |
| Կովկասի այլ շրջաններ | 508,000 |
| Պարսկաստանում . . . | 140,000 |
| Գումար . . | 1.088,000 |

Աւելի հեռու շրջաններ.

| | |
|---|---|
| Պոլս. և Եւրոպ. Թիւրք. | 183,000 |
| Ռուս. և հիւս. Կովկ. | 250,000 |
| Եւրոպայում, Եգիպտոսում և Հնդկաստանում | 120,000 |
| Ամերիկայում . . . . | 130,000 |
| Գումար . . | 683,000 |
| Ընդհ. գումար . . | 4.470,000 |



## ՄԻԱՑԵԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ

—

(Համառօտ տեսութիւն)

Հայաստան կոչւում է այն երկիրը, որտեղ հայերը դարերից ի վեր ապրում են իբրև մի ազգութիւն, և որտեղ նրանք պատմական անցեալում կազմել են, ներկայումս էլ կազմում են ազգային անկախ պետութիւն. Հայաստան բառն էլ նշանակում է հայերի երկիր։ Օտար ազգերը մեզ ընդհանրապէս արմեն են կոչում, իսկ Հայաստանը—Արմենիա։

Եղել են պատմական շրջաններ, երբ հայերի ստեղծած ազգային պետութեան սահմաններն ընդար-

ձակուել են. բուն Հայաստանին կամ Մեծ Հայքին, որ բռնում է Հայկական Բարձրաւանդակը, կցուել են Փոքր Հայքը, Հայոց Միջագետքը, իսկ Ռուբինեան թագաւորութեան ժամանակ էլ (11—14-րդ դարեր) հայկական պետութիւն հիմնուեց Կիլիկիայում։

Հայաստանը տարածւում է հիւս. լայնութեան 37°-ից մինչև 41 և կէս°-ը և արևել. երկայնութեան 38 և կէս°-ից մինչև 48 և կ.°-ը։ Նրա երկայնութիւնն է, արևմուտքից արևելք, աւելի քան 1.000 վերստ, իսկ լայնութիւնը, հիւսիսից հարաւ, մօտ 500 վերստ։ Նա բռնում է մօտ 340.000 քառ. վերստ տարածութիւն, ուրեմն շատ աւելի մեծ է, քան օրինակ ամբողջ Անդրկովկասը։ Իսկ Կիլիկիան տարածւում է 36°—38°



հիւս. լայնութեան և 33°—37° արևելեան երկայնութեան տակ. երկայնութիւնն է՝ մօտ 400 վերստ, իսկ լայնութիւնը՝ 80—100 վերստ։

Համաշխարհային պատերազմի հետևանքով հրապարակ եկաւ փոքր ազգերի ազատագրութեան և ինքնորոշման պահանջը։

Հայ ազգն էլ, դարեր առաջ կորցրած լինելով իր քաղաքական անկախութիւնը՝ իր մէջ չէր մարեց ազատութեան ոգին։ Առանձնապէս վերջին երեսուն տարուայ ընթացքում նա անհուն ճիգեր թափեց ձեռք բերելու իր անկախութիւնը, տալով մեծամեծ չափերի հասնող զոհեր, մանաւանդ համաշխարհային պատերազմի միջոցին։ Եւ նա ձեռք բերեց անկախ և ազատ պետութիւն ունենալու իրաւունքը։

Հայութեան արդար պահանջն է միացեալ եւ անկախ Հայաստան։ Այդ ծրագրի մի մասն արդէն իրագործուած է։ Ներկայումս, ահա երրորդ տարին է, ինչ գոյութիւն ունի և զարգանում է անկախօրէն Հայաստանի Հանրապետութիւնը, որի սահմանների մէջ մտնում են նախկին կովկասահայ երկրամասերը — Երևանի և Կարսի նահանգները, ինչպէս նաև նախկին Թիֆլիսի ու Գանձակի նահանգների կից գաւառամասերը։ Ներկայիս Հայաստանի Հանրապետութիւնը այսպիսով, ունի մօտ 60 հազար քառ. վերստ տարածութիւն, 1 միլ. 600 հազար ազգաբնակչութեամբ, որի ճնշող մեծամասնութիւնը — հայեր։ Անկախութեան գլուխ է անցած հանրապետական կառավարութիւնը՝ ըն-



տրուած երկրի դեմոկրատական ներկայացուցչութեան — Հայաստանի պարլամենտի կողմից։

Եւ սակայն Հայաստանի Հանրապետութիւնը Միացեալ Հայաստանի մի մասն է միայն։ Միացեալ Հայաստանը իր մէջ է առնելու ոչ միայն այժմեան Հանրապետութիւնը (նախկին Ռուսահայքը), այլ և նախկին Տաճկահայաստանի 6 վիլայէթները — Կարնոյ կամ Էրզրումի, Վանի, Բաղէշի, Տիգրանակերտի (Դիարբեքիրի), Խարբերդի և Սեբաստիայի վիլայէթները, իրենց տարածութեան գլխաւոր մասերով։ (Դուրս հանած դրանց ոչ հայկ. շրջանները)։ Միացեալ Հայաստանի մէջ է մտնելու նաև նախկին Տրապիզոնի վիլայէթի մեծ մասը, տալով մեր պետութեանը ելք դէպի

Սև Ծովը, ինչպէս նաև Կիլիկիայի մեծ մասը, տալով մեզ ելք դէպի Միջերկրական ծովը: Այսպիսով ուրեմն Միացեալ և Անկախ Հայաստանի անբաժան մասերն են կազմելու՝ 1) Այժմեան Հ. Հանրապետութիւնը, 2) Նախկին Տաճկահայքի 7 վիլայէթները, (համաձայն 1914 թ. բարենորոգումների ակտի) Կիլիկիան (4 սանջակներ — Մարաշ, Խոզան, (Սիս), Ջեբէլ-Բերեքէթ և Ադանայ):

Այս իմաստով էլ Հայաստանի Միացեալ պատուիրակութիւնը Փարիզի կոնֆերանսին ներկայացրած իր յուշագրի մէջ, ազգի անունով, դնում է հետևեալ պահանջները. .

1 Ճանաչել հայկական անկախ պետութիւն՝ կազմուած 7 վիլայէթների, Կիլիկիայի և Կովկասի հայոց



Հանրապետութեան տերիտորիաների միացումով:

2. Այս կերպով կազմուած հայկական պետութիւնը դրւում է հաւաքական երաշխաւորութեան տակ դաշնակից պետութիւնների և Միացեալ Նահանգների, կամ ազգերի դաշնակցութեան:

3. Հաշտութեան կոնֆերանսը պետութիւններից մէկին տալիս է յատուկ մանդատ Հայաստանին օժանդակելու մի անցողակի ժամանակաշրջանի համար: Մանդատի տևողութիւնը պիտք է լինի առ առաւելն 20 տարի:

4. Հաշտութեան կոնֆերանսը պէտք է որոշէ մի դրամական հատուցում՝ վերականգնելու համար հայ ազգի կրած բոլոր վնասները կոտորածներից, տեղահանութիւն-

ներից, կոոպերատիվներից և աւերուած-ներից։

Միացեալ և Անկախ Հայաստանի (քարտէզը կցուած է սրան) պահանջը հրամայաբար դրուած է այսօր բոլոր հայութեան հատուածների կողմից, բոլոր խաւերի միահամուռ ցանկութեամբ։ Այդ պահանջից հայութիւնը չէ կարող և ոչ մի դէպքում հրաժարուել։

Միացեալ և Անկախ Հայաստանը իրականացման պրոցեսի մէջ է այսօր. վաղը կատարուած և լրացուած պիտի լինի նրա ամբողջացման պրոցեսը։

Ա. Աբեղեան

---



## ՀԱՅ ՄԱՐՏԻՐՈՍԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՆՑԵԱԼԻՑ

Ժամանակակից մարդկութիւնը ապրում է արևելեան առեղծուած կոչուող ողբերգութեան վերջին գործողութիւնը։

Երկու տարր ահա հազարաւոր տարիներ է, ինչ գալարւում են անհաւասար պայքարի մէջ՝ լարելով իրենց բոլոր ուժերը, ձգտելով ոչնչացնել միմեանց։

Մէկը՝ արևելքից եկած թափառաշրջիկների ժառանգորդ օսմանցին էր, որ դարեր առաջ յաւակնութիւն ունէր անգամ Եւրոպայում արևելքի «քաղաքակրթութիւնը» տարածել հրի ու սրի զօրամբ, բայց ընկաւ իր յախուռն ընթացքի կէս ճանապարհին, սպառած իր Ֆիզիքական կորովը ու զուրկ բարո-

յական-կուլտուրական զարգացման իդեալներից։

Մյուսը՝ մի բուռն ժողովուրդ, որ տարօրինակ յամառութեամբ ձըգտում է դէպի Պրոմէթէոսի լուսատու ջահը, իր հազարաւոր տարուայ գոյամարտի ընթացքում զոհելով բիւրաւորները, իր լաւագոյնները...

Մէկը՝ ուժեղ է քանակով, ֆիզիքականով, միւսը՝ իր գաղափարներով, իր վերջնական յաղթանակի հաւատով։

Ու շարունակւում է պայքարը այդ երկու ուժերի միջև։ Հաշտութիւնը լինել չի կարող։ Բռունցքն ու արիւնը ժխտում են քաղաքակրթութիւնն ու գաղափարականութիւնը, ինչպէս նաև ժողովրդական իդէալիզմը ժխտում է աւերն ու կոտորածը։ Այդ պայքարը ունեցել



է իր՝ ամօթալի մէկի ու պանծալի միւսի համար՝ էջերը։ 1915 թ. ապրիլի 11-ը այդ էջերից մէկն է։

Այդ օրը կորստեան անդունդը գլորւած Թիւրքիան փորձեց գլխատել հայ աշխատաւորութիւնը, սպանել նրա Միտքը, յաղթահարել նրա ազատատենչ Ոգին։ Խաժակներ, Ակնունիներ, Վարուժաններ, Զոհրապներ, Սիամանթօներ ու հազար հազարաւոր նման մտաւորականներ բռնատարկւեցին ու ապա նահատակւեցին...

Հրճւում էր ճիւաղը քաղաքակրթութեան ֆորպոստը, իր խաւար հոգու անդորրութիւնը վրդովող հայը սպանած կարծելով։

Բայց սխալւած էր նա. բիրտ ասիացին չկամեցաւ ըմբռնել, որ Գաղափարը սպանել. Անմահը մա-

Նոյնիսկ՝ անկարելի է, որ ազատատենչ ոգին գետնատարած անել նըղբոսի կարենայ։

Հայ մտաւորականութեան ըն գանձալի, հոյակապ դէմքերը ընկան հայութեան ու մարդկութեան ազատագրութեան ճամբի վրայ, և իրենց մահով հայ աշխատաւորութեան յաղթանակը կռեցին։

Չենք ուզում մարգարէանալ, թէ ազգերի ու ժողովուրդների միջազգային ատեանը՝ Փարիզի, Լոնդոնի կամ մի այլ տեղի կոնֆերանսը ինչպէս կը գնահատի այդ նահատակներին, բայց խորապէս համոզուած ենք, որ համայն մարդկութեան լաւագոյն մասը այսօր մեզ հետ ծունր եկած պիտի ասէ՝ փառք անհաւասար կռւում ընկած հերոսներին սրբազան յիշատակին...



1872 Ս. ԹՕՓՉԵԱՆ 1909

# ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ
## (ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ ՆԱՀԱՏԱԿՆԵՐ)

## ԵՂԻՇԷ ԹՈՓՉԵԱՆ

*Օրացոյցներիս հանգուցեալ հիմնադիր* Եղիշէ Թոփչեանը *ծնուել է Ալեքսանդրապոլում 1872 թ. նոյեմբերի 26-ին։ Սկզբնական կրթութիւնը ստանալով նախ ծխական և ապա քաղաքային դպրոցներում, նա 1890—1897 թ. ուսուցչութեամբ է պարապում։ Իր ուսման թերութիւնները լրացնելու համար նախ անցնում է Պետերբուրգ (1898) և ապա Բերլին (1900), ուր ուսումնասիրում է հասարակական գիտութիւններ։ 1902 թւին հաստատուելով Թիֆլիսում, նւիրում է իրեն հասարակական գրական-հրապարակախօս գործունէութեան։ Խմբագրել է տասից աւելի թերթեր՝ «Արշալոյս», «Յառաջ», «Ալիք», «Երկիր», «Ժայռ» «Փայլակ» և այլն։ 1904 թ. սկսում է հրատարակել «Լոյս» պատի, գրպանի և սեղանի օրացոյցները։ 1909 թ. հաստատւելով Էրզրումում հիմք է դնում «Յառաջ» թերթին։ Ահա այդ եռանդուն գործունէութեան շրջանում, ոճրագործ մի հայի գնդակով սպանւում է, Պոլսից-Էրզրում վերադառնալիս Բաբերդէն 5 ժամ հեռու, Խարբակ գիւղի մէջ 1909 թ. հոկտեմբերի 11-ին։*

*Անցեալ տարի լրացաւ նրա մահւան տասնամեակը։*



Գ. ԽԱԺԱԿ
1867—1915



## Գ. ԽԱԺԱԿ
### (Գարեգին Չախալեան)
### (Ի Ն Ք Ն Ա Կ Ե Ն Ս Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն)

*Ծնել եմ Ալէքսանդրապոլ 1867-ին. Նախնական ուսումը այնտեղ աւարտելուց յետոյ մտել եմ Էջմիածնի Գէորգեան Ճեմարանը 1833—6. այնուհետև 7 տարի շարունակ ուսուցչական պաշտօն եմ վարել Բագուի, Գանձակի և Ակուլիսի ծխական դպրոցներում։ Ընտանիքս կը կոչւէր Զախալ Օղլի, որ յետոյ վերացուած Խաժակի 1893-ին անցել եմ Ժընև և ուսարանել տեղւոյն համալսարանի հասարակագիտական* (sciences sociales) *բաժինը։ Իբրև գործիչ՝ գնացել իսկոյն Աղէքսանդրիա ուր մի տարի մնալուց յետոյ անցել եմ Իզմիր (6 ամիս) և Պոլիս (Ղզարի.) ութամեայ բանտարկութիւնից յետոյ աքսորուելով հայրենիք, կրկին հետևել եմ ուսուցչական ասպարէզ։ Ամուսնանալով և*

1903 թ. Թիֆլիս տեղափոխուելով կարգուեցայ խմբագիր «Մշակ»ի և յաջորդ տարին նաև ուսուցիչ Ներսէսեան դպրոցի։ 1906 թ. երբ հնարաւոր դարձաւ ընկերվարական ազով թերթը հրատարակել, Ա. Ահարոնեան, Ե. Թոփչեան և ես հիմնեցինք «Յառաջ», Ալիք» և այլն թերթերը։ 1908 թ ձերբակալուեցի և վեց ամիս բանտ նստելուց յետոյ երաշխաւորութեամբ ազատ արձակուեցի։ Ինն ամսից յետոյ նորից ես ձերբակալուեցի և մի տարու չափ բանտային կեանք քաշեցի Թիֆլիս (Մետեխ), Բագու, Ռոստով և Նովոչերքասկ։ 1913 թ. Սամարքայի ազգ. վարժարանի տնօրէնութիւնը ստանձնեցի։ Խօսելու ընդունակութիւնս ժառանգել եմ մօրէս, տիկ. Սուլթանէն 1887-ի մայիսին էր, որ առաջին անգամ երեւցայ «Մշակ»ի մէջ, «Գաւառացի երիտասարդին» յօդուածով։ Յետոյ աշխատակցել եմ «Մուրճին» և Տա-



րազին»։ 1896-ին հրատարակեցի «Մի բարոյական այլանդակութիւն յեղափոխական մաքուր գործում» և «Ժողովրդի բանաստեղծը Գամառ Քաթիպա» 1904-ին «Հարկերը Տաճկաստանում» Հայրենիք և ազգ. շարժումներ», Հայկական շարժման պատկառները 1905-ին «Ռուսական զեմստվօն և Կովկասի պահանջները» 1907-ին «Դէպի Ֆէդերացիա» 1912 թ. «Ինչ՞ է ազգութիւնը», «Տառապանքի գիշերը» 1913 ին «ինչ՞ է դասակարգը» «Հին արևելք» «Հայոց պատմութիւն» թարգմանել եմ նաև Վինագրադովի 3 հատոր «Ընդ. Ազգաց Պատմութիւն»։ Տարագրուած Պօլսից 1915 թ. ապրիլի 11-ին և նահատակուած



Գրիգոր Զոհրապ
1860—1915



# ԳՐԻԳՈՐ ԶՕՀՐԱՊ

Գրիգոր Զօհրապ ծնւել է Պօլսում, 1860 թ., կրթութիւնը ստացել է նախ Հասքէօ ի Շահնապարեան վարժարանում, ապա Գալաթա-Սէրայի Լիսէյում։ Ունէր նաև ճարտարագէտ-երկրաչափի մասնագիտութիւն։ Մասնաւորապէս իբրև փաստաբան վայելում էր միջազգային համբաւ։ Արևմտահայ գրականութեան մէջ եւ աչքի էր ընկել իր նորավէպերով, ուր երևան էր գալիս նրա [illegible]իւր տրամաբանութիւնն ու իրապաշտութիւնը։ Երիտասարդ հասակից աշխատակցել է պօլսահայ թերթերին. 1892—93-ին Հ. Ասատուրի հետ խմբագրել է «Մասիս»-ը։

Նրա անդրանիկ «Անհետացած սերունդ մը» վիպակը լոյս է տե-

ուել դեռ 1887 թուին։ Գ. Զօհրապի ճառավեպերու մեծ մասը ամփոփուած են 3 հատորների մէջ. «Խղճմտանքի ձայներ», «Կեանք ինչպէս որ է» և «Լուռ ցաւեր»։ Սամաթիայից ընտրուած է եղել ազգային երեսփոխան իսկ Պոլսից՝ օսմանեան պարլամենտի մէպուս (անդամ)։ Այստեղ էր, որ նա Վարդգէսի հետ միասին ցուցադրեց իր կորովը ու անկաշառ ժողովրդասիրութիւնը։ Սուլթանական կառավարութեան «յատուկ ուշադրութեան» առարկայ դառնալով, Զօհրապ հարկադրուած է լինում անցնել Ֆրանսիա որտեղից վերադարձաւ միայն սահմանադրութեան հրատարակումից յետոյ դառնալով գործօնեայից ու խանդավառ ցոյցերու առարկայ։

Տարագրուած Պոլսից 1915 թ. ապրիլի 11-ին և նահատակուած։



# Քաղաքակիրթ. գերիշխանութիւնը

(Հատուած).

Ազգերու և ցեղերու գերիշխանութիւնն իրարու հանդէպ՝ միմիայն իրենց մտաւոր զարգացումով կը հիմնուի և այդ աստիճանին համեմատութիւն է։

Քաղաքակրթութեան գերիշխանութիւն է աս, այնքան հզօր, իրարու մօտ, որքան իրարմէ հեռու ապրող ազգերու ու ցեղերու մէջ։

Այն ազգերը, որոնց այս գերիշխանութիւնը կը պակսի, իզուր բիրտ ուժին կամ պատմական ընւած իրաւունքներու կոչում կընեն զայն ձեռք բերելու համար վերընարին։

Ասիկա՝ տնտեսական աշխարհին մէջ վարկի խնդրին կը նմանի քիչ մը։ Վարկը միմիայն դրամով, այնինքն՝ բիրտ ուժով չստացուիր։

Գ. Զօհրապ

Նոյեմբեր 1908



Յարութիւն Շահրիկեան

1860 — 1915



# ՅԱՐՈՒԹԻՒՆ ՇԱՀՐԻԿԵԱՆ

Յարութիւն Շահրիկեան (Ատոմ) ծնուել է Շապին-Կարահիսարում 1860 թ.: Նախնական կրթութիւնը իր ծննդավայրում ստանալուց յետոյ գալիս է Պօլիս ու ուսանում է Կալաթա Սէրայի Լիսէյում: Տրապիզոն եղած ժամանակ, 1896 թ. յայտնի ջարդարար Նէմլի Զադէ Հաճի Օսմանի հետապնդումի շնորհիւ կը բանտարկուի, բայց շնորհիւ օտար միջամտութեան 13 ամսից յետոյ ազատ է արձակւում: 97-ի վերջերը փախչում է Բաթում, ապա Թիֆլիս, ուր ռուսերէն լեզուին կատարելապէս ծանօթանալով և վերջոյ քննութիւն է տալիս և ձեռք բերում փաստաբանութեան իրաւունք: Դեռ երիտասարդ հասակից աչքի էր ըն-

կնում իբր և անհաշտ ազատական ինչպիսին նա մնաց մինչև իր կեանքի վերջին րոպէն։

Սահմանադրութեան հռչակումից յետոյ նա վերադառնում է Պոլիս և իրէն յատուկ աւիւնով նետւում յեղափոխական պայքարի ծովը դառնալով բոլորի սէրն ու ակնածանքի առարկան։ Եղել է մօտ աշխատակից «Ազատամարտ»ի և այլ մի շարք դաշնակցական թերթերի Նիհիլ, Վաղինակ և Ազատ ծածկանուններով։ Եղել է ազգ. երեսփոխան Սկիտարէն։ Հրաւիրուել է Իթթիհատի կողմից իբրև պետակ. խորհրդի անդամ բայց հրաժարուել է։ Ունի մի շարք երկեր «Պետական նորոգութիւնն և հողային հարցը», «Մեր հատուածքը», «Ազգ. սահմանադրութիւնը», «Բարէնորոգումներու հարցը»։



«Օսմ. կայսրութեան անկման պատմութիւնը» և «Ամուսնական խնդիրը»։ Կան նաև մի շարք այլ անտիպ աշխատութիւններ, որ պահուած են Բէրա, ինչ որ մի յոյնի մօտ։

Տարագրուած Պոլսից 1915 թ. ապրիլի 11-ին և այս նահատակուած։

* * *

## ՄԵԾ ԴԷՄՔԵՐ

Մեծ ազգերու պատմութիւնը անոնց մեծ Դէմքերու պատմութիւնն է։ Ջնջեցէք Կեսարներու, Աղեքսանդրներու, Արիստոտելներու պատմութիւնը, և այլեւս չմնար քայլը Հռոմէական, Մակեդոնական, Յունական մեծութիւններէն ու փառքերէն։

Բայց այս՝ պայմանադրական ճըշմարտութիւն մըն է։ Այդ մեծութիւն-

ները չէին կրնար դարբնել, եթէ միջավայրը և զանոնք ծնող ժողովուրդները ընդունակ չըլլային այդ մեծութիւնները ծնելու, սնուցանելու, մէկ խօսքով դարբնելու։

Այդ պատճառով է, որ կապրին այն ժողովուրդները, որոնք անցեալի հպարտութիւնն ունին, ներկային պինդ փարած են իրենց ստեղծագործութիւններով և իդէալներով, և որոնք իրաւամբ վստահաբար կը նային ապագային։

Ց. Շահրիկեան



Ե. Ակնունի

1878—1915

## Է. ԱԿՆՈՒՆԻ

(Խաչատուր Մալումեան)

Ծնել է Մեղրում (Զոկիստան). դեռ երիտասարդ հասակում ազդուած Գ. Արծրունու գաղափարներից սկսում է աշխատակցել «Մշակ»-ին: Հաստատուելով Պետերբուրգում նա երկար ժամանակ թղթակցում է «Դրօշակ»-ին Է. Ակնունի ծածկանունով, նիւթ ունենալով գլխաւորապէս ռուս-կառավարութեան վերաբերմունքը դէպի կովկասահայութիւնը: Հայ-թրքական ընդհարումներից յետոյ սկսում է գրել «Կովկասեան վէպերը», որ յետոյ առանձին գրքոյկով լոյս տեսաւ հայերէն ու ֆրանսերէն: 1904 թուին մասնակցել է երիտասարդ թիւրքերի և հայոց «Կոնֆերանս»ին:



Հ. Յ. Դ. 1907-ի ընդհ. ժողովը ընտրում է նրան պատուիրակ հայ և թիւրք դաշնակցական խորհրդի, որ շնորհիւ եռանդուն գործնէութեան նրան յաջողւում է համոզել ապագայ իր դահիճներին վերահրատարակել օսմանեան սահմանադրութիւնը: Դրանից յետոյ վերադառնում է Պոլիս, ուր ամբողջովին նւիրւում է սարակական-կուսակցական գործին: 1912-ին մեկնում է Ամերիկա և շրջում համարեա բոլոր հայկական գաղութները: Եղել է անդամ «Ազատամարտ»ի խմբագրական մարմնի: Աշխատութիւններն են՝ «Դէպի կռիւ», «Գ. Արծրունի», «Դէպի երկիր», «Մեծ իդէալիստը», «Կովկասեան վէպեր»: Մօտաւորապէս 50 տարեկան էր: Տարագրուած Պոլսից 1915-ի ապրիլի 11-ին և ապա նահատակուած:



Սիամանթօ

1878—1915



# ՍԻԱՄԱՆԹՕ

## (Ատոմ Եարճանեան)

*Ծնուել է Ակն, 1878-ի յունուարի 1-ին։ 13 տարեկան հասակում գալով Պոլիս սովորում է Միրիճանեան և Պէրպէրեան վարժարաններում։ Բանկ Օտտոմանի դէպքից յետոյ փախչում է Ժընև ու նուիրւում յեղափոխական-գրական գործունէութեան։ Արտասահմանի թերթերն ու հանդէսները («Վաղուան Ձայն», «Անահիտ» «Դրօշակ» «Բանբեր» «Շիրակ» «Բազմիկ» և այլն) իրենց էջերը բաց են անում մատաղ բանաստեղծի առաջ, որ արհամարհելով յանգ ու չափաբերութիւն, իր ժողովրդի մարտիրոսացումը կը երգէր և վրէժի ու հերոսացման զգացումները կարթնացնէր։ 1908 ին*

վերադառնալով Պոլիս աշխատակցում է «Ազատամարտ»-ին երկերը. «Դիւցազնօրէն» «Հայորդիները» «Հոգեվարքի և յոյսի Ջահեր» «Կարմիր լուրեր բարեկամէս» «Հայրենիքի հրաւէր» «Սուրբ Մեսրոպ»։ Տարագրուած պոլսէն 1915 ի ապրիլ 11ին և ապա նահատակուած։

## ԾԱՐԱՒ

Հոգիս վերջալոյսին մահը մօտիկ
կընէ
Ջարդարանքի հեռաւոր հողին վրա
ծանրացիր.
Հոգիս վերջալոյսին ու հողի վէր-
քերը կը խմէ..
Եւ իր մէջ, դեռ իր արցունքին
անձրեւումը կըզգայ...

Սիամանթօ



Դանիէլ Վարուժան
1871—1915

## Դանիէլ Վարուժան

Ծնւել է Սվազի Բրգնիք գիւղում 1884-ին։ Նախնական ուսումը Մխիթարեանների Բերայի և Գատը-քէօյի վարժարաններում աւարտելուց յետոյ՝ ուղարկւում է Բէլգիա՝ Գանտի համալսարանը։ Օսմ. Սահմանադրութեան հռչակումից յետոյ Վարուժանը վերադառնում է Պոլիս և թողնելով դիւանագիտական ասպարէզը, որի համար նա պատրաստւած էր՝ իրեն նւիրում է ուսուցչութեան՝ 1909—1912 պաշտօնավարելով Սվազի և Թոկաթի ազգային վարժարաններում,



Երկերը․ «Սարսուռներ» (Վենետիկ), Ջարդը (Փարիզ), «Տրտունջք Ե. Տէմիրճիպաշեանի» (Սվազ), «Ցեղին սիրտը», «Հեթանոս երգեր» (Պոլիս)։

Նահատակւած 1915 թ.։ Մահից յետոյ թողել է անտիպ բանաստեղծութիւնների մի հատոր՝ «Հացին երգը» վերնագրով։



Ռուբէն Զարդարեան

1874—1915



## Ռուբէն Զարդարեան

*Ծնուել է Խարբերդում 1874-ին։ Տեղական դպրոցում իր նախնական կրթութիւնը վերջացնելուց յետոյ զբաղւում է ուսուցչութեամբ։ Հալածուած տաճկական իշխանութիւնների կողմից նա շուտով թողնում է Թիւրքիան և հաստատուելով Ֆիլիպէ սկսում է հրատարակել «Ռազմիկ» թերթը, որ իր գոյութիւնը պահպանեց մինչև սահմանադրութեան հրատարակուելը։ Վերադառնալով Պոլիս, նա իր շուրջն է համախմբում մի խումբ պատասխանատու դաշնակցական գործիչների և նրանց*

աջակցութեամբ հիմք դնում «Ազատամարտ»-ին (1909 թ. յունիսի 10-ին)։ Ունի մի շարք արձակ գրուածքներ, որոնցից ուշագրաւներն են. «Վճիռ եա մեռնէի», «Սարերու տղան», «Սև հաւը կանչեց», «Պահակները արթուն են», «Առիւծի ժանիքէն» և այլն։

Տարագրուած Պոլսից 1915 թ. ապրիլի 11-ին և ապա նահատակուած։



Վարդգէս

1871—1915

## ՎԱՐԴԳԷՍ (ՅՈՎ. ՍԵՐԷՄՃԵԱՆ)

Ծն. 1871-ին, Կարին։ Նախնական կրթութիւնը տեղում ստանալուց յետոյ իրեն նուիրում է ուսուցչութեան։ 1890 ի մայիսեան ցոյցին մասնակցելու համար կը ձերբակալուի, բայց ներման կարժանանայ։ 1892-էն Հ. Յ. Դաշնակցութեան շարքերում եռանդուն գործունէութիւն ցոյց կու տայ, որի համար նորից կը բանտարկուի։ «Բանկ Օտտոման»-ի ցոյցից յետոյ ռուս. դեսպան Նելիդովի միջամտութեամբ Մարսէյլ ուղարկելով Վարդգէս 1849 ին նորից անցնում է Վան։ Աշխատանքի ընթացքին, 1903 ին, զոհ մատնութեան կը վիրաւորուի ու ձերբակալուելով մահուան կը դատապարտուի, որ Ֆրանսիայի բարե-



կամներու ճնշմամբ ցմահ բանտարկութեան կը փոխուի։ Սահմանադրութեան հռչակումից յետոյ ազատուելով, ընտրուի ազգ. երեսփ. Սկիւտարիէն և Մէպուս՝ իր ծնընդավայրից։ Օսմ. պարլամենտի ամենաականաւոր անդամը։ 1918 թ. ապրիլի 11-ին տարագրուած և ապա նահատակուած։



Վռամեան

1871—1915



## ՎՌԱՄԵԱՆ (ՕՆՆԻԿ ԴԵՐ-ՁԱԿԵԱՆ)

*Ծն. Կօսկա (Պոլիս) 1871-ին։ Նախնական ուսումը Սուրէնեան վարժարանում ստանալուց յետոյ, Լ. Շանթի հետ կուղարկւի Էջմիածին, ուր և աւարտում է ճեմարանի դասընթացը։ Վերադառնալով Պոլիս, լինելով ռուս Նաւագնացութեան պաշտօնեա, Վռամեանը մեծապէս նպաստում է ռուսականի փոխադրութեան գործին շոգենաւերով։ «Բանկ Օտտոմանի» ցոյցից յետոյ հալածական, կապաստանի Բուլղարիա։*

*Այնտեղից մեկնելով Ժընև առ ժամանակ «Դրօշակ» ին կաշխատակցէ։ Մոլեռանդ դաշնակցական, նա կուսակցական շրջաններում յայտնի է նաև Վռամ մականու-*

նով։ Ժընևից անցնելով Ամերիկա, նա մի կողմից խմբագրում է «Հայրենիք»-ը միւս կողմից կազմակերպում տեղական բաղարը։ Պարլամենտական 2-րդ ընտրութիւններին «Մէպուս» կընտրուի Վանի կողմից։ Իշխանի գահիճը, Վանի կուսակալ Ճէվդէթը հեռախօսով մի օր իր մօտ է հրաւիրում Արամին ու Վռամեանին նախազգուշացնելով Արամին, Վռամեանը գնում է կուսակալի մօտ, այլևս չվերադառնալու պայմանով։

ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏ. ՊԱՏՄԱԿԱՆ
ԹԱՆԳԱՐԱՆ

րի մասին, 2) Ինչ է կապիտալը 104—109։ VI Հայաստան. 1) Հայերի թիւը, 2) Միացեալ Հայաստան 110—123։ VII Հայ մարտիրոսագր. անցեալից 123—125։ VIII Կենսագրականներ (լուսանկարներով) 128—160։ 1) Ն. Թոփչեան, 2) Գ. Խաժակ, 3) Գրիգոր Զոհրապ, 4) Է. Ակնունի, 5) Դանիէլ Վարուժան, 8) Ռուբէն Զարդարեան, 9) Վարդգէս, 10) Վռամեան, 11) Միացեալ Հայաստանի քարտէզ։

571
o - 83

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
Ա. և Բ. ԹՈՓՉՅԱՆՆԵՐԻ
խմբագրած

# „ԼՈՅՍ"

պատկ. 1920 թ. օրաց.
ԳԻՆԸ 30 Ռ.

Բովանդակութիւնը (3 մասից) ներկայացնում են. 1) [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] 2) Հայ [illegible] 3) Հայ [illegible] [illegible] [illegible]

Գ. ՊԱՆԻ ՕՐԱՑՈՅՑԻ ԳԻՆԸ 15 Ր.

Դիմել՝ Тифлис, Вокзальная [illegible] дом 24, А. Топчя[illegible]